ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան,
երկու հազար տասնյոթ թվականի նոյեմբերի քսաներկու

Մենք՝ ներքոստորագրողներս, մի կողմից Գառնիկ Բողդանի Գրիգորյանը, ծնված՝ 24.07.1950թ., անձնագիր AM0767055, տրված 13.06.2012թ., 053-ից, հաշվառված ք. Ստեփանավան, Գ. Նժդեհ փ., շ. 19, բն. 39 հասցեում, որի անունից Ստեփանավանի նոտարական տարածքի նոտար Ա. Հարությունյանի կողմից վավերացված 09.10.2017թ.-ի թիվ 2714 լիազորագրով հանդես է գալիս Արսեն Հմայակի Հարությունյանը, ծնված 19.12.1981թ., նույնականացման քարտ՝ 000457655, տրված 07.11.2013թ., 053 կողմից, հաշվառված ք. Ստեփանավան, Չարենցի փ., տուն 140 հասցեում /այսուհետ <Վարձատու>/, մյուս կողմից <Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի պետական կառավարչական հիմնարկը>-ը /պետական գրանցման վկայական 01 Բ 000932, տրվ. 21.04.2004թ., գտնվելու վայրը ք. Երևան-10, Կառավարական տուն 3/, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Արտակ Աշոտի Գրիգորյանի, հաշվ. Մարտունի, Աստղաձոր 4փ. 16 տուն, անձնագիր AM 0389543, տրված 25.07.2011թ. 043-ից, /այսուհետ <Վարձակալ>/, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել Ստեփանավան քաղաքի Գ. Նժդեհի փողոցի թիվ 19ա հասցեում գտնվող անշարժ գույքի՝ այսուհետ օբյեկտ, առաջին հարկի թիվ 1 տարածքից 40 քմ մակերեսով տարածքը (հատակագիծը կցվում է), բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելու նպատակով: Օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Պետական կոմիտեի կենտրոն տարածքային ստորաբաժանման կողմից 26.10.2003թ. տրված թիվ 1801542 սեփականության իրավունքի վկայականի: Օբյեկտի նկատմամբ սահմանափակումներ գրանցված չեն համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Երևանի տարածքային ստորաբաժանման կողմից 21.11.2017թ.-ին տրված թիվ N ՄՏ-21112017-06-0277 միասնական տեղեկանքի:

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը վարձակալության է տրվում մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը: Օբյեկտը հանձնվել է 22.11.2017թվականին:

1.3 Վարձակալության հանձնված օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի, հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարձատուն իրավունք ունի

2.1.1 Վարձակալից պահանջել օբյեկտն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

2.1.2 Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների էական խախտման դեպքում նրանից պահանջել վաղաժամկետ՝ տվյալ եռամսյակի առաջին հինգ օրվա ընթացքում մուծել վարձավճարը.

2.1.3 Եթե Վարձակալն օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակության էական խախտումներով, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.2 Վարձատուն պարտավոր է

2.2.1 Օբյեկտը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2 Օբյեկտը Վարձակալին հանձնել դրան վերաբերող փաստաթղթերով.

2.2.3 Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնվող Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների /գրավի իրավունք, սերվիտուտ և այլն/ մասին.